ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ------------------------------Հ. Դավթյան

«----» -------սեպտեմբերի-------------2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մուշեղ Գալշոյանի անվան 148 ավագ դպրոց

ուսումնական հաստատության անվանումը ,

XI$^5$ դասարան

<u>Մարգարյան Հասմիկ Արտյոմ</u>

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022- 2023»

ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիր/

Դասարանը բաղկացած է 15 աշակերտից՝ 12 տղա, 3 աղջիկ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, երեխաները շատ համախմբված են:

2. Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքերն ուսումնական տարվա ընթացքում. __2022-2023 ուս- տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներն են՝

1. Դասագրքերի բաշխում
2. Դասասենյակի կահավորում
3. Դասարանի ակտիվի ընտրություն
4. Դասագրքերի վիճակի ստուգում
5. Հաճախման ամենօրյա հաշվառում
6. Դասագրքերի հանձնում գրադարանին

2. Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքերն ուսումնական տարվաընթացքում.

Նախատեսվում է աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել ստացած գիտելիքները գործնականում կիրառելու,ինքնուրույն մտածելու,որոշումներ ընդունելու և առաջացած խնդիրները լուծելու կարողություններ և հմտություններ:Անցկացնել զրույցներ և քննարկումներ այնպիսի թեմաներով, որոնք կնպաստեն մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը,սեփական լեզվի պատմության ավանդույթների և ազգային այլ արժեքների կարևորությունը գիտակցելու և դրանց կրողը լինելու ընդունակ անձի ձևավորմանը:

3.Հայեցի դաստիարակություն.

3.1. Հոգևորդաստրարակություն.Զրույցներ անցկացնել բարոյական չափանիշների, համամարդկային արժեքների վերաբերյալ:Ձևավորել անձ,որի սկզբունքները լինեն բարին, գեղեցիկը, պատասխանատվությունը, ազնվությունը,հանդուրժողականությունը:Կարևորել Հայ առաքելական եկեղեցու դերը յուրաքանչյուր հայի կյանքում:

3.2. Գեղագիտականդաստիարակություն

Ձևավորել ու զարգացնել գեղագիտական ճաշակ՝կազմակերպելով այցելություններ պատմամշակութային տարբեր հաստատություններ:Սովորեցնել տեսնել,գնահատել ու պահպանել գեղեցիկը: 33. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Քննարկելով սեփական ժողովրդի պատմության էջերը և առաջ քաշելով ազգային հիմնախնդիրներ՝հասնել նրան,որ յուրաքանչյուրը գիտակցի իր դերը հայրենիքի պահպանման և զարգացման գործում:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն.

Հատուկ ուշադրություն դարձնել ֆիզիկական դաստիրակությանը: Առաջնորդվել <<Առողջ մարմնում առողջ հոգի>>կարգախոսով:Աշակերտներին իրազեկել առողջ ապրելակերպի կանոններին:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Հետևել ամենօրյա հերթապահության կազմակերպմանը, ապահովել աշակերտների մասնակցությունը դպրոցում իրականացվող բոլոր հասարակական աշխատանքներին: Աշակերտների մեջ զարգացնել ուրիշի աշխատանքը գնահատելու կարողությունը:

3.6. Բնապահպանական դաստիարակություն.

Յուրաքանչյուր աշակերտ պետք է գիտակցի,որ ինքը բնության մի մասնիկն է և պարտավոր է պահել և պահպանել այն:Յուրաքանչյուր անձ պետք է կարողանա պահպանել և ավելացնել ժառանգություն ստացած արվեստի գործերը:

3.7. Դպրոց –ընտանիք կապը

Պետք է ապահովել ամուր կապ ընտանիքի և դպրոցի միջև։Ծնողի մշտական հսկողության և ուսուցչի հետևողականության արդյունքում ձևավորվում է լիարժեք և դրական անհատ։

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Սեպտեմբեր

1շաբաթ- Դասագրքերի բաշխում,դասասենյակի կահավորում

2շաբաթ— Սթարմուս գիտակրթական փառատոն 8-11

3շաբաթ———Զրույց-քննարկում ԵՍ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՄ

4շաբաթ——Քաղպաշտպանություն՝ Օդային տագնապ

Հոկտեմբեր

1շաբաթ-Զրույց Իմ հայրենիք թեմայով:

2շաբաթ-Գեղագիտական զրույց:

3շաբաթ-Միջոցառում նվիրված Էրեբունի-Երևան տոնին:

4շաբաթ-Էքսկուրսիա Գյումրի:

Նոյեմբեր

1շաբաթ- Ֆրանկոֆոն երկրներ

2շաբաթ-Զրույց՝ Մեծ հայեր թեմայով:

3շաբաթ-Զրույց քննարկում ապագա մասնագիտական կողմնորոշում թեմայով:

4շաբաթ-Էքսկուրսիա Գառնի:

Դեկտեմբեր

1շաբաթ-Զրույց Ինչ է հանդուրժող,քաղաքակիրթ և մարդասեր քաղաքացին:

2շաբաթ-Զրույց նվիրված աղետալի երկրաշարժի հիշատակի օրվան:

3շաբաթ-Զրույց աշակերտների հոգևոր դաստիարակության մասին:

4շաբաթ-Ամանորյա միջոցառում:

Հունվար

1շաբաթ------

2շաբաթ-Սուրբ ծննդյան տոնի կապակցությամբ այցելություն Սուրբ Հովհաննես եկեղեցի:

3շաբաթ-Զրույց նվիրված մարդու հիմնարար իրավունքներին:

4շաբաթ-Միջոցառում Հայոց բանակին:

Փետրվար
1շաբաթ-Զրույց Ինչ է հանդուրժող քաղաքացին:
2շաբաթ-Այցելություն պատմության թանգարան:
3շաբաթ-Միջոցառում նվիրված Տյառընդառաջ տոնին:
4շաբաթ-Առաջադիմության ստուգում:

Մարտ
1շաբաթ-Այցելություն սրճարան մարտի 8-ի կապակցեւթյամբ:
2շաբաթ-Զրույց Դպրոց-ընտանիք թեմայով:
3շաբաթ-Բանավեճ՝ Պետք է կանայք ծառայեն բանակում թեմայով:
4շաբաթ-Էքսկուրսիա Խոր Վիրապ:

Ապրիլ
1շաբաթ-Ապրիլյան քառօրյա պատերազմին նվիրված զրույց:
2շաբաթ-Միջոցառում նվիրված Մայրության և գեղեցկության տոնին:
3շաբաթ-Միջոցառում նվիրված Սուրբ Զատիկ:
4շաբաթ-Այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Մայիս
1շաբաթ-Զրույց նվիրված հայ զինվորին:
2շաբաթ-Այցելություն Հաղթանակի զբոսայգի:
3շաբաթ-Առաջադիմության ամփոփում:
4շաբաթ-Տարեվերջյան էքսկուրսիա: